17025

368
2-99

192..

2010

368
Հ-99

V 41180-ակ.

2001

240555-ա

(100ք/38495)

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԸ ԳԱՆՁՈՂՆԵՐԻ (Сборщик) ՀԱՄԱՐ.

1). Գանձողը (сборщик) Պետական Ապահովագրության (Պետտրի) Գործակալից ստանում է վճարացուցակը, ուր նշանակված է լինելու թե յուրաքանչյուր քաղաքացի վորքան պետք է ապահովագրավճար մուծի։ Այդ վճարելիքները ցույց են տրված չերվոնեերով և կոպեկներով։

2). Բացի վճարման այդ ցուցակից, գանձողը գործակալից ստանում է նայեվ մի առանձին ցուցակ՝ քաղաքացիներին հայտարարելու համար, վորտեղ յուրաքանչյուր քաղաքացու ցույց է տրված, թե ըստ կոպարի քանի՞ չերվոնային ռուբլով ապահովագրված են իր շինությունները, ցանքսերը և անասունները և թե չերվոն. քանի՞ ռուբլի ու կոպեկ ապահովագրավճար պետք է տա։ Գանձողը այս ցուցակը կախ

և տալիս աչքի ընկնող տեղում, որ ամենքը կարողանան կարդալ և իմանալ։

3). Վճարացուցակը ստանալուն պես գանձողը (сборщик) գյուղական ժողով և հրավիրում, հայտարարում և ստացված ցուցակը և բացատրում և գյուղացիներին, որ կոպարային ապահովագրությունը մացնվում և շնչվոն. ռուբլիներով, կոպարային ապահովագրության կանոնների համեմատ։ Հրդեհից, կարկուտից, անասունների կորուստից մնասվածին, որը իր ժամանակին մուծել և ապահովագրավճարը, Պետապը հատուցելու և նրա վնասները, չերվոնային ռուբլու այն կուրսով, ինչ որ հայտարարված կլինի Պետապի կողմից վնասի հատուցման որը։ Ամեն մի վճարող պարտավոր և իր ապահովագրավճարը մուծել խորդրամանիշներով, չերվոնային ռուբլու այն կուրսով, ինչ որ հայտարարված կլինի Պետապի կողմից վճարման որվա համար։ Վճարողը որքան ուշ մուծի իր ապահովագրական պարտքը, այնքան ավելի շատ խորդրամանիշ պիտի տա։

Ժողովում պետք ազդարարել, որ քաղաքացիները իրավունք ունին իրենց կայքը ապահովագրել նայե լրացուցիչ կերպով կոպարի չափով, յեթե կոպարային այդ գումարը կայքի գնահատման արժեքի 1/3-ից քիչ և։

Ցանքսերը կարելի յե լրացուցիչ ապահովագրել յերկրորդ անգամ վճարելով կոպարային գումարի չափով.

Ծանոթություն. Կոպարը (окладная норма) գնահատման գումարի 1/3-ից բարձր լինելու դեպքում, ապահովագրումը կատարվում և գործակալի միջոցով։

4). Ապահովավճարի գանձման վերջին ժամկետն և 1924 թ. մայիսի 31-ը։ Հունիսի 1-ից գանձումը կատարվելու և սովորական (բնագանձումի) կարգով, որվա կուրսով։ Բացի այդ՝ մինչև ապահովագրավճարի մուծումը չվճարողի անտեսության մեջ վորյեվե աղետ (հրդեհ, կարկուտ, անասունի կորուստ) պատահելու դեպքում վնասը հատուցվելու և վոչ թե որվա կուրսով, այլ մայիս ամսվա համար սահմանված կուրսով։

5). Այնուհետև գանձողը ձեռնարկում և ապահովագրավճարների գանձմանը՝ համաձայն վճարացուցակի, խորդրամանիշներով։ Գանձողը պետք և դրամն ստանա չերվոնային ռուբլու այն կուրսով, որը ավյալ շրջանի կամ ավյալ գանձողի համար սահմանված ձևով կհաղորդի իրեն գործակալը։ Նոր կուրսը իմանալու համար գանձողը պետք և գնա այնտեղ, ուր նրան կըմատնանշի գործակալը։ Սխալ (նշանակվածից բարձր) կուրսով դրամներ ստանալուն համար

գանձողը կպատժվի ըստ օրենքի (Քրեական օրենսգրքի հոդ. 110)։

6). Վճարացուցակում ցույց է տրված թե յուրաքանչյուր քաղաքացուց քանի՞ ռուբլի և կոպեկ պետք է ստանալ։ Այդ գումարները խորդրամանիշների վերածելու համար գանձողը կազմում է առանձին ազդուռակ, չերվ. յուրաքանչյուր ռուբլու և կոպեկի դիմաց խորդրամը նշանակելով։

7) Ամեն անգամ գրամ ստանալիս գանձողը օրահաշվի մեջ (дневная ведомость) համապատասխան սյունյակներում գրում է ստացած գումարը խորդրամով, վորքան չերվոն. ռուբլի և կոպեկ է կազմում դա, գրամի գանձման ամիսն ու ամսաթիվը և վճարողին տված անդորրագրի №-ը։ Անդորրագրում պետք է գրված լինի ստացված գումարը և չերվոն. ռուբլի-կոպեկներով և խորդրամներով։ Անդորրագիրը պետք է տրվի վճարողին անմիջապես, գրամն ստանալիս և նրանում ու նրա արմատում պետք է նշանակվի ստացման ամիսն ու ամսաթիվը։ Հետևյալ թվականով անդորրագիր տալը օրենքի կողմից հետապնդվում և վորպես դեղծում (քր. որ. հոդ. 116)։

8). Գանձողը անդորրագրերն ստանում է գործակալից։ Յուրաքանչյուր անդորրագիր ունի իր արժեքը, վորի վրա գանձողը գրում է նույնը,

ինչ վոր անդորրագրում և անպայման գրում է վերջինս վճարողին տալու ժամանակ։ Գանձողը այդ արմատները պահում է իր մոտ և գործակալը պահանջելիս՝ հանձնում է նրան։

9) Գանձողը պարտավոր է ամեն մի քաղաքացու հիշեցնել, որ նա իրավունք ունի իր շինությունները ապահովագրել կոպարային լրացուցիչ ապահովագրությամբ միևնույն կոպարային գումարի չափով, յեթե դա՞ ավելի չե գնահատման գումարի 1/3-ից։ Յեթե քաղաքացին համաձայն է իր շինությունների լրացուցիչ ապահովագրման, գանձողը նրանից վերցնում է նույնքան գրամ ել, որքան կոպարով է և նշանակում է այդ վճարացուցակում, անդորրագրում և արմատում։

Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի լրացուցիչ ապահովագրել նույնպես ցանքսերը, վճարելով նույնքան գումար ևս, որքան կոպարային ապահովագրավճարն է։ Կայքը լրացուցիչ ապահովագրությամբ ապահովագրված համարվում է լրացուցիչ վճարը տալու որից սկսած։ Անասունների լրացուցիչ ապահովագրություն գանձողը կատարելու իրավունք չունի, այլ դրա համար պետքե դիմել գործակալին։

10) Գանձողը իր հավաքած ամբողջ ապահովագրավճարի գումարները պարտավոր է առանձին պահել և վոչ մի դեպքում չպետք է գոր-

ծաղրի վորպեվե այլ վճարումներ լրացնելու համար:

11) Գանձողը պարտավոր է իր հավաքած ապահովագրական դրամները հանձնել գործակալին, վերջինիս սահմանած ժամանակամիջոցում, բայց վոչ ուշ քան շաբաթը երկու անգամ: Դրամը հանձնելիս գանձողը պարտավոր է ներկայացնել նաև իր մոտ յեղած անդորրագրերի արմատները և վճարացուցակները: Իր հանձնած ամբողջ գումարների դիմաց գանձողը գործակալից պետք է ստանա սահմանված անդորրագիր (սերիա Ε կամ Д): Եթե նա թղթադրամի հետ հանձնում է նաև իրական չերվոնեցներ, պետք է ստանա առանձին անդորրագիր չերվոնեցների համար:

12). Գործակալի կարգադրությամբ գանձողը կարող է հավաքած դրամները հանձնել փոստին կամ այլ հիմնարկության և այդ դեպքում դրանցից ստացած անդորրագիրը պետք է հանձնի գործակալին, իր հերթին սահմանված անդորրագիր ստանալով:

13). Ապահովագրավճարները գանձելիս գանձողը պարտավոր է ընդունել քաղաքացիների հայտարարությունները նոր շինությունների, անասունների գնման կամ վաճառման մասին և այդ հայտարարությունները գործակալին հանձնել: Նույնպես գործակալին է հաղորդում ապահովագրավճարը սխալ հաշված լինելու մասին տրված հայտարարությունները:

14). Ամբողջ դրամները գանձելուց հետո գանձողը պարտավոր է վճարացուցակը, անդորրագրերի արմատները և իր մոտ մնացած անդորրագրերը վերադարձնել գործակալին:

15). Վորպես վարձատրություն կոպարային ապահովագրավճարները գանձելու աշխատանքի՝ գանձողը ստանում է վորոշ տոկոսը իր հավաքած գումարի, վորպիսի տոկոսը սահմանում է Պետապահովագրության Յերևանի Գրասենյակը և հայտնում է այդ մասին գանձողին գործակալի միջոցով:

16). Գանձողը պատասխանատու է որենքի առաջ՝ չերվոնային բուբլին դիտավորյալ կերպով սխալ խորդրամանիշների վերածելուն և սխալ կուրս կիրառելուն համար՝ քրեական որենսգրքի 116-րդ. հոդ., դրամները գործակալին ուշ հանձնելուն համար նույն որենսգրքի 110-րդ. հոդ., ապահովագրավճարի գումարները վատնելուն համար քրեական որենսգրքի 113-րդ հոդվածով և բացի այդ, բոլոր հիշյալ դեպքերում, զրկվում է վարձատրության իրավունքից:

17). Այս հրահանգը ստանալու մասին

1ԵՐ

գանձողը համապատասխան սայլական և սալիս գործակալին։

18). Հրահանգի վերոհիշյալ բոլոր այն կետերը, որ վերաբերվում են շենքերի և անասունների ապահովագրության, ուժի մեջ են մնում այդ ձևի ապահովագրությունը Հայաստանում կիրառելու որից սկսած։

Տպագրական Տրեստի 2-րդ Տպարան Յերևան

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0049980